

№ 7 ՅՈՒԼԻՍ 1888

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 7

«Աղբիւրի» գրական ալբոմ։ Ծերենց և Օր. Մենիկ (Դոկտոր Յովսէփ Շիշմանեան Թադուհի Զիշմանեան Մելիք-Աղարեան)
Գլուխդ երբէք թէ ճերմկի . . . . . Թադուհի Զիշման.-Ծերենց
Մնաս Բարեաւ (ոտանաւոր) . . . . . Ծերենց։
Ծերենցի ինքնաձեռագիր (Fac-similé)
Մի Խրատ (հէքիաթ) . . . . . Աղ. Աբէլեանց։
Հարաւային բնութիւն (պատկեր)
Առ Աղբիւր (ոտանաւոր) . . . . . Գալ. Եգանեանց։
Մարտին Լութեր (շարուն. և վերջ.) . . . . Փ. Վարդանեան։
Խրախոյս (ոտանաւոր) . . . . . Ռ. Թադէոսեան։
Անեկդոտ. . . . . Խուլ։

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նորագոյն դիտողութիւններ Հրատ մոլորակի վրայ։ Զինաց կայսրութիւնը։ Անգղիոյ տէրութիւնը։ Զօրաւոր և անզօր ձայներ։

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Ամենամեծ հովանոցը։ Լողացող թատրոն։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկներ։ Խնդիր։ Բեբուս։ Նախընթաց №№-ի մէջ եղած հանելուկների, առաջարկութիւնների, բեբուսի բացատրութիւնները։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Զարունակվում է «ԱՂԲԻՒՐԻ» ներկայ տարուայ բաժանորդագրութիւնը։ Նոր բաժանորդ գրուողը կը ստանայ № 3-ից հանդերձ բոլոր պրէմիաներով, իսկ սպառուած №№ 1 և 2-ի փոխարէն 50 կ. գրքեր ու ԼՈՒՏԵՐ և ՄԵՆԱՔԷՄ յօդուածների սկիզբը։

«Աղբիւրի» № 8-ը լոյս կը տեսնի № 9-ի հետ սեպտեմբերի մէկին։

Հասցէ փոխելիս պէտք է հաղորդել և հին հասցէն էլ մանրամասն ու 35 կ. փոստի մարկաներ։

«ԱՂԲԻՒՐԻ» ՎԱՃԱՌԱՆՈՑ

Յատկապէս երեխաների, աշակերտների և ընտանիքների համար։ «Աղբիւրի» վաճառանոցում ծախվում են մանկական գրքեր, պատկերներ, նկարներ, նօտաներ, բազմատեսակ շքեղ իրեղէններ երեխաներին և աշակերտներին ընծայելու համար. դպրոցական և դասական հարուստ և բազմատեսակ պիտոյքներ. տպվում են նոյն վաճառանոցում մօնօգրամներ (զարդարուն գլխատառեր նամակների ճակատներին). գրելու, փոստի և ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ամեն տեսակ ընտիր ԹՂԹԻ ՄԵԾ ՊԱՀԵՍՏ, որ կազմում է Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՐԴՈՒՆԻՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՀՈՒՇԱԿԱՒՈՐ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ։

Վաճառանոցը ընդունում է Ռուսաստանում և արտասահմանում հրատարակուող մանկական թերթերի բաժանորդագրութիւն։

Վաճառանոցը կամենալով դիւրացնել գաւառաբնակ հեղինակների, թարգմանիչների գործը, ընդունում է Թիֆլիսում տպագրել տալու նրանց աշխատութիւնները։ Ընդունում է միջնորդ լինել և պատուիրել նրանց համար ամեն տեսակ պատկերներ, կլիշաներ։ Վարձու է տալիս «Աղբիւրի» ծաղկատառերից և նկարներից։—Վաճառանոցն ընդունում է կօմիսիայով ծախելու զանազան հրատարակութիւններ։ — Վաճառանոցում զետեղուած է և «Աղբիւրի» խմբագրութեան գրասենեակը։

Վաճառանոցը յանձն է առնում գաւառական և գիւղական ուսումնարանների համար կազմել գրադարաններ, քիմիական լաբորատորիաներ, ֆիզիկական կաբինետներ, մանկական խաղեր և դպրոցական ու մանկական հասակի վերաբերեալ պարագաներ։

Վաճառանոցն ունի իւր սեպհական կազմարանը, պատրաստում է պատկերների համար ամեն տեսակ և գնանոց շրջանակներ։ Պատուէրները կատարվում են ճշտութեամբ և անյապաղ։

Օտար քաղաքներից դիմում են՝ Тифлисъ. Магазинъ Дѣтскаго журнала „Агбюръ“. Իսկ հեռագրով՝ Тифлисъ, „Агбюръ“.

ԱՂԲԻՒՐ

ԳԻՒՄԱՍԵՍՑ ՊՏՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ
(Երեխաների եւ դաստիարակների համար)

Հրատարակվում է միւնոյն դիրքով, միւնոյն ուղղութիւնով եւ նոյն աշխատակիցների մասնակցութիւնով։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Агбюръ“, իսկ քարտուղարութիւնից՝ Tiflis (Caucase) Rédaction de la Revue „AGBUR“.

Խմբ.-Հրատ. Տ. Նազարեան։

ՁԵՖՋՅՈՎԳՅԱՆ ՅԱՄՈՒՅՈՎԱ ԵՎ ՈՒՍՅՈՎԳԵԱ ԹՅՈԼՈՒՆՅՈՒ Ե. Ո. ԿԵԼԱՅԻՆ ՍՏԱՅԳԱՅՈՒ ԵՎ ՅՅԵԼԱ ՓՈՅՆԻՆ ՄԱԼԱՆԻՈՅԳՅՈՒ.

Մյուռեղ գամուցեմա

ՅԱՌԱՅԱՆՈՅԱՆՈ

ՀԱՌՈ ՊԻՌՅԵԼՈ

գամուցեմեալո Դ. ԴԱՊԱՌԵՅՈՒՆ եվ ՅԱՆՈՎ ԷԴՈՅԱՌԱՅՈՒՆ-Մոյռ.

ցանս 30 կոպ.

Գարեալ քալաքեանդյան ՇՅՈՒԼՈՒՆՅՈՒ Մոմարտոնց ամ ադրեսոս։ Въ Тифлисъ въ Типографіи Е. И. Хеладзе, на Саперной ул., въ собственномъ д.№ 4.

«ԱՂԲԻՒՐԻ» ՎԱՃԱՌԱՆՈՅԸ

Խնդրում է ուսումնարանական վարչութիւններին առաջիկայ ուսումնական տարուայ դասագրքերի և դասարանական պարագաների համար պատուէր տուողներին կարելիին չափ շուտով տան իրանց պատուէրները։ Վաճառանոցը մինչև օգոստոսի 1-ը 'ի միջի այլոց կունենայ պատրաստի 100,000 հատ աշակերտական գրութեան ամեն կերպ տոդաձ տետրակներ։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տպելու համար

Ն. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆԻ

Քսան Հայրենագիտական Աշխարհագրական Նամակները

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Վերնագրով.

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Ցանկացողները կարող են դիմել հեղինակին «Աղբիւրի» խմբագրութեան միջոցով։

«Աղբիւրի» Վաճառանոցում ծախվում են. ՐԱՖՖԻ դրավիւր պատկերը հաստ կարտոնի վրայ տպուած։ Գինը 10 կ. ճանապարհածախսով 15 կ. դրամի փոխարէն կարելի է փոստի մարկաներ ուղարկել։

Օլէոգրաֆիկական պատկերներ սրբազան պատմութիւնից հատը 3—5 ր. ճանապարհածախսով։

Խոնարհաբար խնդրում եմ այն յարգելի անձանց, որոնք իմ հանգուցեալ ամուսին Աղէքսանդր Արարատեանի „ԳԱՒԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ“ գրքի համար բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն էին առել, բարեհաճեն ուղարկել ինձ բաժանորդագրութիւնը և գրամը, որպէս զի կարող լինենք տպագրելու բաժանորդաց ազգերը, որովհետև արդէն տպագրութիւնը աւարտվում է։

Հասցէս՝ Тифлисъ. Шушаникъ Араратянъ, Ѳоминая ул. № 15 д. Доврышева

Այրի Զուշանիկ Արարատեանց

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐԻ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 7

ՅՈՒԼԻՍ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1|2
1888

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Іюня 1888 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2



† ԹԱԳՈՒՀԻ ԶԻԶՄԱՆԵԱՆ—ՄԵԼԻՔ ԱԶԱՐԵԱՆ (ՕՐ. ՄԵՆԻԿ.)

† ԴՈԿՏՈՐ ՅՈՎՍԷՓ ԶԻԶՄԱՆԵԱՆ—ԾԵՐԵՆՑ

Գլուխդ երբէք թէ ճերմկի,
Նշենւոյ նման պիտի լինի։

Ա. տը Միւսէ.

Երբէ դու դեռ, գերբէ դու միշտ.
Սրբտիդ անշէջ վառարանէն
Քանի մը կայծ տուր քու ազգիդ.
Զնա՝ այդ կայծերն տի արծարծեն։

Գերբէ, թէպէտ գքեզ քարկոծեն
Քո թշնամիք և... բարեկամք.
Անոնց համար պատրաստի չեն
Քու ժրպիտը ւ՝ արհամարհանք։

Բաղդէս, ունինք և Գրակքոսեանք,
Մովսէսք նաև մեզ պակաս չեն,
Որոնց օրէնք և պատուիրանք
Քաշկրռտական քերականք են։

Թող օրինակ իրենց առնուն
Քու խիստ ոճը՝ պարզ, կորովի,
Եւ թող տեսնեն թէ ներշընչմունք
Պէտք է սրբտէ միայն բղխի։

Բայց մանաւանդ ինձ համար գրէ,
Ինձ՝ որ քու ձեռք ու գրիչ սիրեմ.
Ինձ՝ որ զգացմունքդ ի սիրտս հընչէ,
Ինձ՝ որ քու միտք ու խօսք պաշտեմ։

Հաւատա՛, աղջիկդ է կը զրուցէ՝
Որ գլուխդ թէպէտ կը ճերմկի,
Բայց նշենւոյն կը նմանի,
Ում ծաղիկը պտղաբեր է։

30 յուլիս 1877. Կիպրոս

ԹՈՓՈՒՉԻ ԶԻՆՈՐԱՆԵՐՆ—ՎԵՐԵՆՆ

ՄՆԱ՛Ս ԲԱՐԵԱՒ

Մընաս բարեաւ, որդեակ սիրուն,
քոյ հօրդ միակ ըսփոփանք.
Ճակատագիրն այնպէս վճռեաց
զի նորա լաստ յարածուփ
Յաշխարհիս ծով ի տղայ տիոց
միայնութեամբ տատանի։
Ձերկար ուղին հատեալ երթայ
նաւահանգիստն յանծանօթ.
Եւ ո՞ գիտէ՝ որ մրրրրկաց
մընան նմա սպառնալիք,
Յորոց ըզքեզ զերծ պահպանել
եղեն սրրտին իւր մաղթանք։
Յարդ շատ եղև օտար աստեղց
և ի ներքոյ և յափունս
Նորա նաւուն յեցեալ ի կողմ՝
տարուբերեալ շրջեցար,
Լքքեալ երբեմն հեշտալի դէմս,
և զրնկերաց քաղցր բարբառ։
Իսկ մինչ յայժմուս գողտր զաւակաց
կայտռեն ըզքև թռիչք ոտից,
Եւ քաղցրաձայն մրրմունջք՝ մայրի՛կ,
մայրի՛կ գոչեն անդադար,
Թող ըզպապիկն զի երթիցէ, յոր վայր ելցէ
Նախախնամին հրաման։

1884 Յունիս ԾԵՐԵՆՑ

ԾԵՐԵՆՑԻ ԻՆՔՆԱՁԵՌԱԳԻՐԸ (Fac-similé)



Հանգուցեալ Ծերենցն այնքան փափուկ էր սիրում իր միակ քնքոյշ դուստր Թագուհուն (օր. Մենիկ), որ նրանց միմեանցից խզել անհնար էր, ուստի, և մենք մեզ իրաւունք չէր համարեցինք զատ-զատ տպագրել նրանց պատկերները։ Բաղդ ունենալով ձեռք բերել Ծերենցի և օր. Մենիկի անտիպ ոտանաւորները, տպագրեցինք ներկայ համարում, որ ընթերցողը տեսնէ թէ հայր և դուստր ինչպիսի անհուն սիրով կապուած էին միմեանց հետ։ Այս ոտանաւորները հաղորդեց մեզ մեր տաղանդաւոր աշխատակից պ. Ա. Եզեկեանը, որ Ճիշմանեանի ամենամերձ բարեկամն էր։ Պ. Եզեկեանը ի միջի այլոց հաղորդեց մեզ, որ հայրը գրելով իւր ոտանաւորը՝ չէր տուել աղջկանը կարդալու, որ չը լինի թէ սաստկապէս յուզուի նրա քնքուշ սիրոյ և վնասուի։ Ծ. Խ.

ՄԻ ԽՐԱՏ

(Հէքեաթ)

Քաղաքում ապրում էր մի շատ հարուստ մարդ։ Նա մի աղջիկ ունէր՝ այնքան գեղեցիկ, որ աշխարհի ամեն կողմերից գեղեցիկ պատանիների և քաջ իշխանազուններին աչքը նրա վրայ էր. ամենքն ուզում էին նրան հարս ունենալ։ Բայց որովհետև հօր մէն մէնակ մխիթարանքն էր. այդ պատճառով հայրը շատ սիրելուց դեռ չէր վճռում մէկին տալ։ Իսկ գեղեցիկ տասն և հինգ տարեկան աղջիկը իւր հօր հարուստ ապարանքներում, ինչպէս մի հրեշտակ դրախտում, մեծանում էր և օրաւուր գեղեցկանում։

Միևնոյն քաղաքում կար և մի այրի կին, նա էլ ունէր Անդիկ անունով մի որդի։ Քաղաքի պատանիները նրան ծաղրում էին նախանձից, բայց և զարմանում էին նրա վրայ։ Նա քաջ էր, սրտոտ և ուժեղ։ Սիրում էր հանաքներ անել և ուրիշներին ծիծաղցնել. ուրախ տղայ էր. շատ անգամ ասում էր, թէ ինքը ժամանակով հարուստ մարդ է դառնալու, թէ ամենազեղեցիկ աղջիկ է ուզելու, լաւ լաւ տներ է շինել տալու. սրա համար էլ շատերը ծաղրում էին նրան, թէ դա արհեստ չունի, բան չունի. ինչո՞վ է պարծենում։ Նրա շորերը ճոթռտված էր, սրունքները բաց. բայց նա ողորմութիւն չէր խնդրում. ջուր էր կրում, փայտ էր կտորում, ուրիշ բան էր անում սրա նրա համար և իւր գլուխը պահում ու մօրն օգնում։

Մի ցուրտ օր էր։ Անդիկն առաւ տոպրակը և գնաց այն հարստի տան շուրջը պտտելու, որ փայտ և տաշեղներ հաւաքէ։ Յանկարծ նրա աչքը ընկաւ հարուստ տան

պատուհանին, և ի՞նչ է տեսնում. մի հրեշտակի նման աղջիկ իրան է նայում և ծիծաղում։ Անդիկը կարծում է թէ օրիորդը իրանով զմայլել է. տաշեղները վէր է ածում և սկսում ձեռքերով զանազան հանաքներ անել։ Աղջիկը ծիծաղից չի կարողանում աւելի մտիկ տալ և փախչում է պատուհանից։ Նա էլ է լսած լինում Անդիկի մասին, թէ նա ամենագեղեցիկ աղջիկն է ուզելու։ Բայց մեր տղան ուրիշ բան է կարծում. գլխապատառ վազում է մօր մօտ. թէ «այ մէր, դէհ չ՚ուստ արա, գնա ինձ համար էն աղջկան նշան դի՛ր»։ Խեղճ մայրը մնում է սառած։ «Այ գիժ տղայ» ասում է. «նրա հայրը ոսկի արծաթի մէջ է լողում, իսկ մենք իսկի փայտ էլ չունինք տաքանալու, այդ ինչ՞ը ես դուրս տալիս»։ Անդիկը սուտ սուտ բարկանում է և աւելի ոչինչ չի ուզում լսել։ Նա շատ սիրում էր մօրը։ Սկսում է՞ վախեցնել մօրը, թէ «ես ինձ լիճը կը քցեմ կը խեղդուիմ, եթէ չես գնալ նրանց մօտ»։ Ճարը կտրած խեղճ կնիկը վախվախելով գնում է հարստի տունը, խնդրում է, աղաչում։—Ներեցէք իմ համարձակութեանս. ես մի խեղջ այրի եմ, ամուսինս օտարութեան մէջ մեռել է. մի որդի ունիմ, նա էլ խելքից քիչ զուրկ է. ողորմեցէք ինձ, նա ինձ ուղարկել է, որ ձեր աղջկան իրան համար նշան դնեմ։ Խեղճ կինը ամօթից կարմրել էր։ Բայց հարուստն այնպէս բարի մարդ էր, որ ոչ թէ ծաղրեց նորան, այլ ընդհակառակը ուրախութիւն յայտնեց, հրաւիրեց և խնդրեց նստել. պառաւը կուչ եկած նստեց. խեղճը կարծում էր իրա վերայ ծաղր են անում։ Աղջիկը գնաց և մի ամանի մէջ քաղցր մրգեղեններ բերաւ։ Հայրը ցոյց տուաւ իրա աղջիկը և ասաց. «Ահա իմ քոյր. ես նրան պահել եմ մի արժանաւոր տղի համար։ Ինձ համար աղքատ հարուստ չըկայ։ Թէ խելք ունի, նա ամենահարուստն է։ Ով խելք չունի, թէկուզ ոսկով պատես, նա աղքատ է։ Քո տղին չեմ տեսել, բայց ասում

են որ շատ խելօք տղայ է. ես իմ աղջիկս նրան կըտամ, միայն թէ թող ինքը դայ ինձ մօտ, խօսինք։ Երբ նա խօսքը վերջացրեց, պառաւը շուտ հեռացաւ. ուրախացած՝ որ գոնէ տղի ձեռքից ազատվեց։ Անդիկը երբ մօրից այդ լսեց, լուացուեց, մաքրուեց, մազերը սանդրեց և փառաւոր կերպով հէնց էն օրը յայտնուեց Հարստի տան դահլիճում, կարծելով, թէ հէնց էդ է աղջիկը տուին իրան։

Ինչպէ՞ս չէ. փեշերդ լայն բաց արա։

Հարուստն առաջարկեց նրան հետևեալ պայմանը, ասելով։—Ահա քեզ ճանապարհածախս. մեզանից շատ հեռու Ասորեստանի մի քաղաքում կայ մի ծեր կոյր՝ բայց շատ հարուստ մարդ։ Այդ խորհրդաւոր մարդը ամենայն երեկոյ դուրս է գալիս քաղաքադռնում կանգնում. քաղաք նոր մտնողները անց ու դարձ անողները գալիս են այդ մարդուն մօտենում, երեսին խփում և ասում. «ադամորդի, ամօթ քեզ». ամեն մի այդ ծեր կոյրի երեսին խփողը ստանում է նրանից մի ոսկի և գնում իրա բանին։ Լսել եմ խելօք և քաջ տղայ ես. մէկ գնա, իմացիր. ո՞վ է այդ մարդը, ինչո՞ւ է այդպէս անում։ Արդեօք. որ չանէր կըմեռնէ՞ր. ոսկուց ձեռք է վեր առել թէ ինչ է։ Վերջապէս եթէ նրա պատմութիւնն իմացար, եկար ինձ պատմեցի՞ր, իմ աղջիկս քեզ կըտամ։

Աստուած ոյժ տայ մեր Անդիկի ոտերին։ Ճար չունէր, ի՞նչ անէր։ Ընդունեց պայմանը և ճանապարհածախսը, «մնաս բարով» արաւ, և միւս օրը ճանապարհվեց դէպի Ասորեստանի քաղաքը։

Ճիշտ երկու շաբաթ այն օրից յետոյ, մի կարմիր երեկոյ էր, Անդիկը յայտնուեց յիշեալ քաղաքի յաղթական կամարների տակ. այստեղ էլ հենց նա տեսաւ կոյրին, մարդիկը մրջիւնի պէս խառնի խուռն անցուդարձ էին անում, խփում էին նրա ալեղարդ երեսին, ասելով. «Ադամորդի, ամօթ քեզ»։ Իսկ նա սառն կերպով կարծես

թեթևութիւն զգալով այդ խօսքերից, տալիս էր ամեն մէկին մի ոսկի։ Անդիկի ճանապարհածախսը քչացել էր. մօտեցաւ և ափսոսալով խփեց կոյրի ձիւնի պէս սպիտակ երեսին, մի ոսկի ստացաւ և քաշուեց մի կողմ։ Երբ երեկոյի խաւարը վրա հասաւ, անծանօթ քաղաքի դռները կողպեցին, մարդիկ ցրվեցին։ Անդիկը քայլ առ քայլ հետևեց կոյրին, և նրա մօտ մնաց այդ գիշեր։ Երբ ընթրիքի էին նստել, նա բացատրեց իւր միտքը, իւր ճանապարհորդութեան պատճառը, թէ ինչու է եկել և վերջապէս շատ խնդրեց կոյրին, որ նա պատմէ իրան իւր արարքի պատճառը։

Շատ որ ստիպեց Անդիկը, ծերունին սկսեց պատմել իւր դլխի անցքը.

ԾԵՐ ԿՈՅՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Երիտասարդ ժամանակս ես մի իշապան էի։ Եօթն էշ ունէի, որոնցով պահում էի թէ ինձ, թէ ծնողներիս։ Մի օր քաղաքից բաւական հեռու սարից քար էի բերում էշերս բարձած. ծառերի միջից մի ձայն լսեցի, որ կարծես ինձ էր կանչում։ Յետ նայեցի տեսնեմ մի թափառական երգիչ անտառի միջից ինձ է նայում և մատով կանչում։ Մօտեցայ նրան և ողջունեցինք միմեանց։ Նա նայեց ինձ և յետոյ էշերիս ու ծիծաղեց։ Ես հարցրի պատճառը. նա բացատրեց ինձ այսպէս։

—Դու մի առողջակազմ և լաւ տղայ, էշապան ես դառել, բայց ես ուզում եմ քեզ ամենահարուստ մարդը շինել։ Ի՛նձ լսի՛ր։ Ահա այս անտառում ես ճանաչում եմ մի տեղ ուր ահագին գանձ կայ թաքցրած. արի՛ դատարկի՛ր էշերիդ բեռները և հետևի՛ր ինձ։ Ես մի երգիչ մարդ եմ, ամեն տեղ իմ քնարովս կապրիմ, դու մի խակ պատանի ես, ես խղճում եմ քեզ։ Ինձ բաւական է չորս

էշի բեռը, իսկ քեզ կըտամ երեք էշի բեռն. համաձայն ես։

—Անտարակոյս. պատասխանեցի ես։

Մենք դիմեցինք անտառի դէպի շատ խորը, երբ արդէն էշերիս բեռը դատարկել էր։ Նա գնում էր առաջից իսկ ես չու անելով հետևում էի նրան։ Յանկարծ նա կանգ առաւ, ես նայեցի առաջ և տեսայ մի մեծ գերեզմանաքարի նման սալ։ Երդիչը թափերը մի կողմ արաւ, ինչ որ երդ մրմնջաց, և մի հնսրալի բանալի դնելով քարի տակից ոլորեց երեք անգամ, ահագին սալը մի կողմ գլորուեց։ Վա՛յ քո տղիս տղայ. դեղին ոսկիները աչքերս տարան։

Դէհ, մեր տղայ, շուտ արա՛ էշերդ բեռնիր, որ էլ տեղը չէ. ասացի ինքս ինձ մտքումս։ Երբ դորձներս վերջացրինք. հետաքրքիր բան, երդիչը ինչ որ պստիկ թղթի մի կապոց այնտեղից փոշի վերցրեց և դրեց դրպանը։ Ես ուշադրութեամբ նայեցի։ Երբ արևը թեքվեց դէպի իւր մուտքը մենք ճանապարհվեցինք։ Էշերիս բոժոժները հանեցի, որ լսող չըլինի։ Շատ չըգնացած՝ մնաս բարով երբ բաժանվեցինք իմ բախտաբեր բարեկամիս հետ, հէնց քիչ հեռացայ թէ ոչ, մտածեցի՝ «մեր տղայ, լաւ չվարուեցիր. նա մի թափառական երդիչ է, նրա ի՞նչին է պէտք էնքան ոսկին. արի դարձիր մէկ էշի բեռը յետ ինդրիր։ Իսկոյն և վազեցի նրա մօտ, գլուխս քորեցի, նա հասկացաւ բանը և առանց դժուարութեան համեցէք արաւ։

Այժմ ես չորս էշաբեռն ունէի։ Բայց արի՞ տես, որ ագահութիւնը կուրացրել էր ինձ։ Մտածեցի, «ինչո՞ւ, էշերը իմը լինի, նա՝ տանի երեք իշաբեռը, շատ շատ մի կողպէք է բացել էլի. դարձայ, մէկն էլ պահանջեցի. նա էնպէս, հէնց ժպտալով, հինգերորդը համեցէք արաւ։ Բայց ես հնգով չըկշտացայ, երեսս պնդացրի, յետ դարձայ և ասացի. «բարեկամ, ի՞նչիդ է պէտք այսքան ոսկի դու մէն մէնակ մարդ ես, արի՛ մէկն էլ տուր ինձ»։ Նա

զիջեց և այդ էլ։ Գոնէ այդ վեցով բաւականանայի. ոչ. երեսս շան կաշի էր դառել մանաւանդ, որ այն խեղճը հէնց առանց խօսելու ասում էր, «Տա՛ր քէֆ արա՛»։ Օգտվելով սրանից, գնացի եօթներորդն էլ խնդրելու։ Տուաւ և այդ էլ։ Այլ ևս ի՞նչ կուզես բարեկամ. ո՛չ, մտածեցի ես. երևի այն անիրաւը, այն թղթի կապոցում աւելի թանգ բան տարաւ, թէ չէ ինչու եօթ էշաբեռը ոսկին ինձ կը տար, ու ինքը մէկ ոսկի էլ չէր վերառնի»։ Գլուխդ ինչ ցաւացնեմ, դարձայ և այդ փոշիի ետևից։ Հարցրի, «այդ ի՞նչ փոշի է, աղնիւ բարեկամ։

—Ոչինչ. ասաց նա.—Հէնց այնպէս, անմահական հող է։

—Ի՞նչպէս թէ անմահական, զարմացած հացրի ես։

—Ոչինչ։ Ով քսէ իւր աչքերին, կանմահանայ. երբէ՛ք չի մեռնիլ։

—Բաս որ այդպէս է, աղնիւ բարեկամ, ինձ էլ տայիր մի փոքր։ Նա առանց խօսելու, ժպիտը երեսին, հանդարտութեամբ հանեց գրպանից. մեկնեց ինձ։ Ես առի. իսկ նա ինչպէս մի ոգի աներևոյթացաւ մի ակնթարթում։ Էշերս քշեցի տուն։ Ես կարճ ժամանակում շինել տուի այս գեղեցիկ ապարանքը։ Այժմ ժամանակն էր փոշին գործադրելու. ահա փող, տուն, հարստութիւն, ոսկի, ո՞ւմ համար են սրանք, քսի՛ր աչքիդ, անմահանաս. ասացի ու իսկոյն քսեցի աչքերիս և կուրացայ . . .

Ֆերուզին լացեց. իսկ Անդիկն սկսեց մխիթարել նրան։

—Ո՛չ. իմ որդի, ասաց կոյրը. իմ մխիթարութիւնս այն կլլինի, որ մարդիկ թքեն իմ ադահ երեսին, անիծեն ինձ, ասեն «թի՛ու երեսիդ, ադամորդի» որ սիրտս հովանայ։ Նա կրկին արտասուքից խեղդվեց. քիչ յետոյ աւելացրեց.

—Այո, որդի, գնա հասիր մուրազիդ. բայց չըմոռա-

նաս փորձառու կոյրիս խրատը. երբէք ագահ չըլինիս։

Անդիկը միւս օրը, վերջապէս, բաժանվելով իւր բարեկամից, ճանապարհուեց իւր մօր և հարսնացուի մօտ։

Անսպասելի կերպով երբ նա յայտնուեց նախ մօր և ապա մեծատան մօտ, նրանք շատ զարմացան. իսկ սիրող մօր ուրախութեանը սահման չկար։

Վերջը հարուստ մարդը ձեռքը դրեց նրա դլխին, օրհնեց նրան և ասաց։

—Իմ որդի. ահա իմ աղջիկը. ես տալիս եմ որա ձեռքը քեզ. դուք այսուհետև միմեանց էք պատկանում։ Ես աւելի ասելիք չունիմ. արդէն փորձառու կոյրը քեզ ասել է այն, ինչ որ ես պիտի կրկնեմ. այո՛ որդի, կըրկնում եմ.

Երբէք ագահ չը լինիս, որովհետև ագահութիւնը բոլոր մոլութիւնների մայրն է։

Քանի՛ մի օրից յետոյ ամբողջ քաղաքին փողերի անոյշ ձայնը հրաւիրում էր Անդիկի հարսանիքին։ Նրանք պսակվեցին հասան իրանց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին։

ԱՂԻՔՍԱՆԴՐ ԱԲԵԼԵԱՆՑ

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԲՆՈՒԹԻՒՆ

ԱՌ ԱՂԲԻՒՐ

Դիմիր մշտական, պաղպաջուն աղբիւր,
Թող բուսնին ծաղկունք քո սիրուն ափին.
Եւ նրանց միջից ուրախ կարկաչով
Սահիր ու խառնուիր յորդառատ գետին:

Սահիր դու շուտով դէպ՝ իմ Հայրենիք
Առոգիր նրա Հողն անարատ.
Թող պարզ ալիքդ ուրախ, ժպտալով՝
Ընդհարուին իրար, դնան լիառատ:

Այնտեղ կը տեսնես դժբաղդ այգեպան,
Այգիք է ջրում նա բահը ձեռքին.
Երդում է վշտոտ, ճակատը քրտնած,
Կանդնում է յոգնած, գործում է կրկին:

Միւս կողմը նայես, կրտեսնես վառուած
Գաշտերի վերայ գոյնզոյն ծաղիկներ,
Եւ կանաչազարդ մարգերի վերայ
Արօտն են ընկած սիրուն դառնուկներ:

Այնտեղ կը տեսնես քո ափերիդ մօտ
Խումբերով կանգնած քնքուշ պատանիք.
Քեզ կրբարևեն, և դու իմացիր,
Որ այնտեղ է իմ սիրուն Հայրենիք:

Եւ երբ դու տեսնես ալեզարդ ծերուկ
Խռոված հոգով նստած քո ափին,
Լուաց դու նրա չորցած արտասուք
Եւ ուժ տուր նրա կեանքի թելերին։

Ասա դու նրան, որ բաւ է այդքան
Դառը հառաչանք բղխեն քո սրտից,
Բաւ է քեզ, բաւ է, հայր իմ ալէոր,
Թող էլ չը թափուին արցունք քո աչքից. . .

Գալու է մի օր այն ուրախ ժամը,
Որ պայծառ արև կրփայլէ երկնից,
Վշտերից մաշուած քո պանդուխտ որդին
Նոր հոգի, նոր կեանք կստանայ նորից։

ԳԱԼ. ԵԳԱՆԵԱՆՑ.



ՄԱՐՏԻՆ ԼՈՒԹԵՐ

Անցաւ մի շաբաթ, երկու շաբաթ. Լութեր սկսաւ ձանձրանալ պարապ կեանքից. սիրտն ուզեց կարդալ ու գրել: Թանաք, թուղթ, գրիչ և գրքեր բերին նրա համար: Այն ժամանակ նա գրեց ընկերներին. «Երբոր Վորմսից հեռացայ, վրաս անծանօթ մարդիկ ընկան և չգիտեմ որի՞ դղեակը տարին: Սկզբում վատ կարծիք ունէի դրանց մասին. այժմ տեսնում եմ որ չարակամ չեն և հետս լաւ են վարվում: Կը ցանկայի իմանալ, թէ ո՞վ է բարերարս»:

Մի քանի ժամանակ անցնելուց յետոյ՝ նրան թոյլ տուին դուրս ելնել աշտարակից երբ և կամենար, միայն թէ վերադառնալու պայմանով: Գնում էր անտառ, զանազան բոյսեր էր հաւաքում, դեղեր պատրաստում: Երբեմն նրա բացակայութիւնը տևում էր ամբողջ օրեր. այդ միջոցին ման էր գալիս գիւղերի մէջ աղքատներին օգնելով, հիւանդներին բժշկելով: Նրան տրուած էր մի ձիապան. ո՞ւր էլ գնար, ձիապանը միշտ հետն էր:

Գէորգ ասպետին ամենքը սիրեցին արած լաւութիւնների և բարի խրատների համար:—«Ո՞րքան աղքատ մարդիկ կան աշխարհումս», մտածում էր նա. «ոչ ոք չէ ուզում նրանց օգնել, իսկ մենակ անկարող ես ամենքին հասնել: Պէտք է որ ամեն մի տուն իւր յատուկ խորհրդականն ունենայ. այս խորհրդականն է Սուրբ գիրքը: Ժողովուրդը չէ կարդում դրան, և ի՞նչպէս կարդայ, քանի որ լատիներէն չգիտէ: Երանի՞ թէ մեզնից մէկն այս գիրքը

գերմաներէն թարգմանէր. այն ժամանակ բոլորին հասկանալի կըդառնար և իրաւունք կ'ունենայինք ամեն մի շինականից պահանջելու, որ Սուրբ գիրքը կարդար և Աստուծոյ պատուիրանների համեմատ՝ սիրով, ճշմարտութեամբ, արդարութեամբ ապրէր»։

Եւ ահա Լութեր ձեռք բերաւ Ս. գրքի լատիներէն օրինակն և վճռեց գերմաներէն թարգմանել։ Խրթին և



մութ խօսքեր որ պատահէին, իսկոյն նայում էր յունական կամ եբրայական օրինակների վրայ, որ նրանցով ստուգէ այն խօսքերի բուն իմաստը։ Իսկ եթէ մի բան անհասկանալի երևնար, օգնութեան էր կանչում Մելանխտոն ընկերին, որ իրաւունք ունէր նրան այցելութիւն անելու։ Մելանխտոն շատ գիտուն և յունաց ու լատինացւոց լեզուներին քաջ հմուտ մարդ էր։ Պատահում էր,

որ երբեմն Լութեր ամբողջ երեք չորս օր նստած մտածում էր մի որ և է բառի կամ տողի վրայ, չկարողանալով թարգմանել. այդ միջոցին Մելանխտոն գալիս էր և ասում, թէ ո՞ւր և ի՞նչ խօսք պէտք էր դնել։

Մի անգամ Լութեր նստած՝ Ս. գիրք էր թարգմանում. դրսում արդէն մթնել էր և ամենքը քնել էին։ Լապտերը հազիւ հաղ վառվում էր։ Լուութիւն էր ամեն տեղ. միայն ժամանակ ժամանակ լսվում էր մկան կրծելը յատակի տակ կամ բուի ողբալն անտառում, երբեմն էլ դայլերի օռնալը հեռուից։ Ամբողջ աշտարակում դարթուն մարդ չկար։ Ահա Լութեր հասաւ Ս. գրքի այն տեղին, ուր սատանան Քրիստոսին փորձում է։ Կարդաց այդ տեղը. իսկ լապտերն արդէն մարելու վրայ էր։ Մինչ Լութեր ուզում էր կտրել պատրոյկի այրուած ծայրը, մէկ էլ տեսնես մի մարդկային ստուեր նշմարեց պատի վրայ, մի ստուեր, որ կոտոշներով և պոչով էր։ «Այս նա է», ասաց Լութեր ինքն իրեն. «ա՜յ, ես քեզ կրտամ»,—և այս ասելով հասցրեց ստուերին թանաքամանն և կանչեց. «կորի՛ր, անիծած»։ Ստուերն անհետացաւ։—Լութերի սրտին երկիւղ տիրեց. կարդաց «Հայր մերը», ուշքի եկաւ և երբ մօտեցաւ պատին, վրան տեսաւ մի ահագին թանաքի բիծ, իսկ յատակի վրայ՝ թանաքամանի կտորտանքը։—Այս դէպքից յետոյ ամեն եկաւորներին ցոյց են տալիս Լութերի բնակած սենեակն աշտարակի մէջ և այս թանաքով սևացած տեղը պատի վրայ, ուր երևցել էր նրան սատանան։

Այսպէս Լութեր օրըստօրէ Ս. գիրքը թարգմանելով, վերջապէս աւարտեց և ասաց ինքն իրեն. «Այժմ ամեն մարդ կարող կըլինի կարդալ մի անգամից երեք չորս թերթ և աւելի. կարդալն այժմ հեշտ կըլինի. իբրև հարթ տախտակի վրայ յառաջ կ'երթան և ոչ մի տեղ չեն դայթիլ, միայն թէ կարդային։ Իսկ մենք Մելանխ-

տոնի հետ որքան աշխատեցանք, որքան քրտինք թափեցինք ամեն մի տողի վրայ։ Այժմ Աստուծոյ խօսքը չէ թէ միայն վանքերի և քաղաքների մէջ կ'ապրի, հապա գիւղերի մէջ էլ կըշրջէ և աղքատների խրճիթը կըմտնի»։

Ղուտով Լութերի բարեկամներին յայտնի եղաւ, որ նրա բարերարն ուրիշ մարդ չէր, բայց թէ սաքսոնեան իշխան Ֆրիդրիկոս իմաստունը։ Այդ իշխանը միշտ կուսակից էր Լութերին։ Նա վախենալով, որ պապի ծառաները Լութերին մի վնաս չհասցնէին, հրամայել էր իւր ասպետներին գիտութեամբ յարձակուիլ վրան, իբրև օտարականներ, և տանել թաքցնել մի հեռաւոր տեղ, որպէս զի ոչ կայսրը, ոչ էլ մի ուրիշ մարդ չիմանայ թէ ուր էր, մինչև որ վտանգը կանցնէր։ Լութեր պատսպարուեցաւ իշխանի բուրգում տասն ամիս։ Այդ միջոցին լսեց, որ բարեկամներն, եռանդից մղուելով, սկսել էին իւր խօսքերն այլապէս մեկնել, քան թէ ինքն։—«Պէտք չէ պաս պահել,»—ասում էին նրանք.—պէտք չէ պատարագ մատուցանել, պէտք չէ պատկերներ, վանքեր, պէտք չէ մկրտութիւն»։—Լութեր չկարացաւ դիմանալ այսպիսի ամբարշտութեան և չնայելով ոչ կայսրին, ոչ էլ պապի անէծքին, վերադարձաւ Վիտտէնբէրգ և սկսաւ նորից քարոզներ խօսել։—«Արդեօք Հարկաւո՞ր է,—ասում էր նա,—աբեղայ ձեռնադրուիլ, թէ Հարկաւոր չէ. արդեօք պէ՞տք է ամուսնանալ քահանային թէ պէտք չէ. արդեօք պէ՞տք է պասի ժամանակ ուտիս ուտել, թէ պէտք չէ ուտել—այս բոլորը ամեն մարդ կարող է վճռել, ինչպէս և ուզենայ։ Եթէ կարող ես—պահիր, չես կարող—մի՛ պահիր։ Ոչ ոք իրաւունք չունի քեզ բռնի ստիպելու։ Սիրեցէք ընկերներիդ, ինչպէս սիրում էք ինքներդ ձեզ»։

Ութ օր քարոզ խօսեց, մինչև որ ժողովուրդը հանդարտեցաւ։ Յետոյ սկսաւ եկեղեցական գործերը կարգի բերել։ Սաքսոնեան իշխանը հրամայել էր, որ նա և հայր

վիկարն ամբողջ վիճակի մէջ շրջագայեն և եկեղեցիները, վանքերը, վարժարաններն աչքէ անցնեն։ Գնացին և բոլոր վանքերն ու վարժարանները քննեցին։ Ճանապարհին Լութեր քարոզում էր, թէ «Ահա, Աստուծոյ օգնութեամբ թարգմանեցի գերմաներէն Հին և Նոր Կտակարանները։ Ֆրիդրիկոս իմաստուն բարերարս թոյլ տուաւ ինձ շինել իմ սեփական եկեղեցին. այժմ պատարագը գերմաներէն կ'ասուի, ամեն մի խօսքը ձեզ հասկանալի կըլինի, ամեն մի մարդ իւր յատուկ Աստուածաշունչը կ'ունենայ. իսկ եթէ ձեզնից մէկն անհոգ գտնուի և դաւակներին վարժարան չըտայ, այնպիսին օրէնքով կըպատժուի. իսկ ով որ ծուլութեամբ անդրագէտ մնայ, եկեղեցին նրան հաղորդութիւն չի տալ։ Առաքեցէք վարժարան ձեր դաւակները»։

Ուսուցանում էր նոյնպէս, թէ «Սիրեցէք և օգնեցէք միմեանց, ինչքան որ կարող էք։ Խօսքերի և ճառերի մէջ չէ հոգւոյ փրկութիւնը,—էշին էլ կարելի է երգել տալ. հապա քրիստոնէական հաւատոյ և բարի գործերի մէջ է։ Թող ձեզնից ամեն մէկը բարի գործէ և այնպէս շարժի, որ թէ իրեն օգուտ լինի, թէ ընկերին»։

Լութերի թշնամիները դանդատուելով ասում էին. «Պատարագն և աղօթքը պէտք է լատիներէն կատարել, որպէս զի Աստուծոյ ընդունելի լինին. իսկ գերմաներէն լեզուով միայն յիշողք են տալիս, ախռռի, յարդի վրայ են խօսում—այդ լեզուով չէ կարելի Աստուծոյ հետ խօսել։ Պէտք չէ, որ հասարակ ժողովուրդը Ս. գիրք կարդայ տան մէջ. տան մէջ մաքրութիւն չկայ, այն տեղ կատարվում են ամեն տեսակ պիղծ բաներ—միթէ կարելի է այդպիսի տեղում Ս. գիրքը պահել։ Դա մի անպատշաճ բան կըլինէր. այնուհետև ամեն մարդ Աստուածաշունչն իւր ուզածին պէս մեկնել կըսկսէր. Լութերի արածը հերետիկոսութիւն է»,—ասում էին նրանք։ Բայց նրանց խօսքերին այլ ևս ականջ դնող չկար։ Գերմանական իշ-

խանները տեսան, որ Լութերի քարոզը ժողովրդին օգտակար էր և հրամայեցին, որ իրենց երկիրներում եկեղեցիների մօտ վարժարաններ շինուին, երեխաներին դիր կարդալ սովորցնեն, Աստուծոյ խօսքն ուսուցանեն։

Ամեն տեղ նոր կարգեր յառաջ եկան. եկեղեցիների մէջ այժմ կարդացվում էր Լութերի գերմանական Աստուածաշունչը, երգերը գերմանական լեզուով էին երգվում,—ժողովրդից այլ ևս արծաթ չէին յափշտակում. վանքերը փակուեցան, բոլոր աբեղաները պաստոր (քահանայ) կամ վարժապետ դարձան։ Այնուհետև աշխարհականներն ինքեանք էին իրենց համար քահանայ ընտրում։ Լութեր նոյնպէս քահանայ դարձաւ։ Նա բերան գիտէր Ս. գիրքն և ուր էլ գնար, քարոզ էր ասում ժողովրդին։ «Ձեր կարծիքով բոլոր չարիքը—ժանտամահն ու սովը սատանայից են գալիս», ասում էր. բայց եթէ փութով ուսանիք և խելքերդ ճշակէք,—սատանան ձեզ չի դիպչիլ և վնաս չի տալ»։

Մի անգամ Լութեր գնաց Մելանխթոն ընկերի մօտ. սա հիւանդ պառկած էր, հազիւ շունչ քաշելով։—«Հմա տրորել է քեզ սատանան», ասաց նա, և սկսաւ աղօթք կարդալ, որ Աստուած զօրութիւն տայ ընկերին և մահից ազատէ։—«Դէհ, միամիտ եղիր»,—ասաց և յետոյ չես մեռնիլ. Աստուած ջերմ աղօթքս կըլսէ»։ Միւս անգամ որ եկաւ, ընկերն արդէն առողջ էր։ Սկսան խօսակցել և Լութեր ասաց. «Արդէն ծերացել եմ. շատ վիշտ կրեցի, շատ քարշ եկայ. բայց դեռ չեմ գտել ինձ համար մի հանգիստ անկիւն։ Ինձ թւում է, թէ քահանայ մարդուն մենակ լինելը լաւ չէ։ Ահա դու ամուսնացել ես. ինձ էլ ժամանակ է ճարել մի տանտիկին։ Առանց ամուսնութեան փրկութիւն գտնել դժուար է մեզ։ Ամուսնութիւնն՝ առաջին գործն է. երկրորդն է՝ երեխաներին դիր կարդում սորվեցնելը, որպէս զի պարկեշտ, խելացի մարդ դառնան։

Այսպիսով թէ Աստուծոյ հաճելի գործ արած կըլլինինք, թէ մարդկան»։—«Մենակ ապրելը լաւ բան է. բայց երկուքով—առաւել լաւ», ասաց Մելանխտոն. «դէհ ուրեմն գնա՛ քեզ համար մի հարս գտիր կոյսերի միջից։ Որքա՜ն կոյսեր կան այժմ, որոնք վանքերը փակուելուց յետոյ ազատ ման են գալիս»։

Լութեր փառքի որ հասաւ, նրա հայրն իւր բարկութիւնը գորովի փոխեց. սա էլ յորդորում էր որդուն, որ ամուսնանայ։ Վանքերը փակուելուց յետոյ կոյսերը ցրուել էին դէպի տուն։ Նրանցից շատերը գալիս էին Լութերի մօտ. ոմանք խորհուրդ հարցնելու, ոմանք գործ խնդրելու, ոմանք էլ վարժուհու պաշտօն ստանալու համար։ Մի օր եկաւ մի կոյս, որի անունն էր Կատարինէ Բօռա։ —«Խոստացել էի քեզ մի գործ ճարել», ասաց Լութեր. բայց տես, ինչ մտածեցի. լաւ չէ՞ր լինել, որ ուրիշներու մօտ ծառայելու փոխարէն, ինքդ ամուսին ունենայիր և քո սեփական տանդ համար աշխատէիր»։—Չնորհակալ եմ, Լութեր, հոգատարութեանդ համար,—ասաց կոյսը. «բայց ես ուիտ եմ արել ոչ ոքի հետ ամուսնանալու, եթէ ոչ՝ քեզ հետ կամ Ամդորֆ բարեկամիդ հետ։ Շատ եմ լսել քարոզներդ, կարդացել եմ գրքերդ. լաւ եմ ճանաչում քեզ և բարեկամիդ—լաւ մարդիկ էք։ Եթէ ձեզնից մէկին կին չդառնամ, էլ ոչ ոքի չեմ երթալ—այս է վճիռս»։—Այս խօսքերը Լութերին դուր եկաւ։ Նա գնաց Մելանխտոնի մօտ և ասաց. «Այսպէս և այսպէս է բանը. թէպէտ Կատարինէն նորատի չէ, բայց ինձ դուր է գալիս. նա ու ես մէկ մէկու յարմար ենք»։—Մելանխտոն ասաց. «Լաւ և առողջ աղջիկ է. ճանաչում եմ նրան. պակասութիւններ չունի և կարդացող է. իսկ և իսկ քեզ յարմար կին կըդառնայ—աւելի լաւը չես գտնիլ»։—«Ուրեմն թող այդպէս լինի, ասաց Լութեր. կ'երթամ նրան խօսք կըտամ»։

Մէկ շաբաթից յետոյ պսակուեցան և Հարսանիք կատարեցին։ Լութերի ծերունի հայրը, պառաւ մայրն և որոնց հետ ուրիշ շատ հիւրեր հարսանիքին ներկայ էին։ —«Գովում եմ սրդուս, որ այսպիսի տնտես կին ընտրեց, ասաց հայրը։ Փառք Աստուծոյ, որ արժանացայ սրանց միասին տեսնելու»։

Հայրը երեք շաբաթից յետոյ վախճանեցաւ. այլ ևս մի տարուց յետոյ՝ մայրն էլ վախճանեցաւ։ Մարտին շատ ցաւ զգաց, բայց ոչ երկար, որովհետև տխրելու ժամանակ չունէր, գործերն ու հոգսերն հետզհետէ աճում էին։ Ժամանակով ինքն էլ վեց զաւակի տէր դարձաւ. ամենքին էլ կրթում էր Աստուածային երկիւղի և որդիական հնազանդութեան մէջ։

Ստէպ հաւաքվում էին նրա մօտ գիտնական մարդիկ, ծերունիներ և ուրիշ եկաւորներ, Տանտիկինը դիտէր ամենքին հիւրասիրել, իսկ տանտէրն՝ իմաստուն բաներ խօսել։ Բացի այդ, նրանց մօտ կարելի էր և լաւ երաժշտութիւն լսել։ Տանտէրը նուագում էր քնարի և սրնգի վրայ, տանտիկինն էլ երգում էր։ Երբ նուագ ու երգից ձանձրանային, սկսում էին եկեղեցւոյ, վարժարանի վրայ խօսել։—Եթէ երբեմն մի որ և է ընտանիքի մէջ խռովութիւն ծագէր, կամ զոյքերի բաժանման վրայ վէճ բացուէր, կամ կինը ամուսնու հետ թշնամանար, կամ թէ մի վարժարանի կամ եկեղեցւոյ շինութեան համար խորհուրդ հարցնելու պէտք լինէր,—իսկոյն դրկում էին Լութերի ետևից, և երբ գալիս էր, ասում էին. «բանն այսպէս է, ինքդ քննիր, ինչպէս վճռես, այնպէս էլ կ'անենք»։

Այսպէս տպրեցաւ մինչև խորին ծերութիւն և մեռաւ բոլորովին խելքը գլխին և մեծ պատուի մէջ։ Թէ նրա ազգականներն և թէ ուրիշ գերմանացիք շատ տրրտմեցան, որ նա այլ ևս կենդանի չէր։

Լութերից յետոյ գերմանական աշխարհում մի նոր

հաւատ յառաջ եկաւ և նրա անուամբ Լութերական կոչուեցաւ, սրա հետևողներն էլ Լութերականք կոչուեցան. իսկ որոնք պապին էին ընդունում և եկեղեցական ծէսերն առաջուայ լատինական կարգով կատարում, կոչվում էին կաթոլիկ և նրանց հաւատը—կաթոլիքական։—Լութերական հաւատն ընդունում է միայն Հին և Նոր կտակարանները, ուրիշ եկեղեցական գրքեր չէ ընդունում։ Պատարագի տեղ՝ լութերական եկեղեցիներում հոգևոր երգեր են երգվում. պաստորներն առանց ֆարաջայի են մանգալիս։ Պատկերներ չեն պաշտում, միայն Փրկչի խաչելութեան են երկրպագում։ Քարոզներն և ժամասացութիւնը գերմանական լեզուով են լինում. պասեր չեն պահում։

Վորմս քաղաքի մէջ, ուր 365 տարի առաջ կամենում էին դատապարտել Լութերի վարդապետութիւնն և իրեն էլ ողջ ողջ այրել,—այժմ շինել են նրա համար մի պղնձեայ արձան։ Այս արձանի վրայ Լութեր կանգնած է իւր ամբողջ բնական հասակով, ձեռքում Ս. գիրքը բռնած։ Արձանի վրայ գրուած են այն խօսքերը. որ նա ասել էր Վորմսի ժողովում. «Ահա կանգնած եմ խօսքիս վրայ և չիպիտի յետ կանգնիմ. օգնիր ինձ, Աստուած իմ. Ամէն»։ Լութերից վայր քանդակուած են նրա այն բարեկամներն, որոնք իւր հետ միասին ճիգն էին թափել մի և նոյն գործի համար—Ֆրիդրիկոս իմաստուն սաքսոնեան իշխանը, Մելանխտոնը, խարոյկի վրայ այրուած Հուսն և ուրիշ բարեպաշտ մարդիկ։ Արձանը կանգնելու ժամանակ, 1868 թ., գերմանական կայսրն էլ Վորմս գնաց. Գերմանիայի ամեն կողմերից այն տեղ հաւաքուեցան զանազան իշխաններ, աղնուականներ, գիտնականներ, հոգևորականներ և ուրիշ շատ մարդիկ մի բարի խօսքով Լութերին յիշատակելու համար։

Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԽՐԱԽՈՅՍ

Թռիր, թռիր, իմ նաւակ,
Պատռէ կուրծքը մեծ ծովի,
Յառաջ վազէ դու անվախ՝,
Ոյժը մեծ է իմ բազկի։

Թող վրփրէ այս մեծ ծով,
Թող ղրկէ մեզ սար ու տափ,
Բլրից-բլուր թռչելով,
Մենք կը դիմենք դէպի ափ։

Անդ բացվում է արշալոյս
Եւ ասպարէզ նոր կեանքի.—
Դէհ, իմ նաւակ լիայոյս,
Ինձ ափ հանիր ուղղակի։

Ք. ԹԱԴԷՈՍԵԱՆՑ

ԱՆԵԿԴՈՏ

. գիւղացի մի խուլ մարդու այծերը կորչում են. գընում է որոնելու։ Երկար որոնելուց յետոյ պատահում է մի վար անողի, որ նոյնպէս խուլ է լինում։

—Բարի աջողում, աղբերացու, ասում է իծատէրը. այստեղ այծեր չես տեսնէլ արածելիս։

—Աստծու բարին, պատասխանում է վար անողը, շնորհակալ եմ, Աստուած որդիքդ պահի։

—Եօթն էր, չէ՞, մինի պոզն էլ կոտրած։

—Հա՛ (գլխով անելով), ասում է վար անողը. ինչ անեմ, եզներս շատ են յոգնել, այսօր (ձեռքը մեկնելով) հէնց այսքանից աւելի չկարացի վարել։

—Շատ ժամանակ է՞, ինչ որ տեսել ես այստեղ արածելիս։

—Հա՛ (էլի գլխով է անում վար անողն), այդ կողքի տափը երեկուայ վարածս է։

—Բա Հիմա չգիտես, որ կողմի վրայ գնացին։

—Ո՞րն ես ասում, փռշնի կշտի տափը՞. հէնց առաջին օրուայ վարածս այն է. և եթէ Աստուած յաջողի, այսօր այս պրծնեմ, էդուց էլ (ձեռքը մեկնելով) էէէ այն հեռու տափը որ երևում է՝ ցաքուտի վերև, այն եմ վարելու։

—Ասել է դէնը գնացին հա. շատ շնորհակալ եմ, եղբայր, եթէ որ քո ասած տեղումը գտնեմ այծերս, խօսքեմ տալիս որ պոզը կոտրած էծը քեզ կընծայեմ, ասում է իծատէրն ու գնում։

—Գնաս բարին, ձայնում է նրա ետևից վարողը. Աստուած քեզ էլ յաջողութեան մէջ պահի, քո մինն էլ հազար դառնայ։

Եւ իրաւ որ այծերը հէնց այնտեղ են լինում, ուր մատնացոյց արաւ վար անողը։ Առաջն է անում բերում. երբ մօտենում է վար անողին, պոզը կոտրածի ականջից բռնում է ու ճղղացնելով տանում մօտը և ասում.

—Ես իմ խօսքի տէր մարդ եմ. ա՛ռ, եղբայր, հալալ լինի քեզ մօրրդ կաթի պէս։

—Է՛յ, ինչե՞ր ես ասում, վախեցած պատասխանում է վար անողը. ես ինչո՞ւ պէտք է դրա պոզը կոտրէի։

—Վա՛յ... սրա՛ն մտիկ տուէք. ինչի՞, քանի որ ես պոզը կոտրածն եմ խոստացել։

—Հաւատացնում եմ, ես չեմ կոտրել. . . :

—Ես ի՞նչ անեմ, ես այդ եմ խոստացել քեզ, ա՛ռ։

—Տօ մարդ Աստծու (բարկանամ է վար անողը), ասում եմ, որ ես չեմ կոտրել։

—Որ քեզ պէս հազարն էլ լինի, ես այս եմ խոստացել։

—Ախր ինչո՞ւ չես հաւատում, եղբայր, որ ասում եմ ես չեմ կոտրել.—Աստուած, երկինք, գետինք, հող, ջուր, ցամաք, իմ հոր հոգին գիտենայ, որ ես չեմ կոտրել, վա՛յ...։ Ախր ես ինչո՞ւ պէտք է կոտրէի դրա պոզը։

—Հազար էլ որ ասես, առողջը չեմ տալ, չէ։

—Տօ եղբայր, ասում եմ, չես հաւատում, երդում-պատառ եմ լինում, դու էլի չես հաւատում. խաչը վկայ, ինչ անհաւատ մարդ ես եղել դու։

—Իսկի էլ չէ. ախր ինչո՞ւ տամ պոզը չկոտրածը, քանի որ ես պոզը կոտրածն եմ խոստացել քեզ. բայց դու էլի քո էշն ես քշում։ Դէ որ այդպէս է, արի գընանք տանուտէրին գանգատ և թող նա վճիռ տայ. արի գնանք էլի...։

Բարեբախտաբար այս անգամ իրար հասկանում են։

—Աչքիս վրայ, խսկոյն վրայ է բերում վար անողը. տանուտէրը չէ, որ թագաւորն ինքն էլ լինի, ես էլի կասեմ երեսին, որ ես չեմ կոտրել և էլ երդումով կըհաստատեմ, որ ես իսկի քո այծերը չեմ տեսած իմ աչքով. գնանք։

Մեր երկու խ ո ւ լ գանգատաւորները գալիս են հէնց այն միջոցին, երբ տանուտէրն իւր կնոջ հետ կռուել, խռովել ու սաստիկ բարկացած, կրակ կտրած տանից դուրս էր գալիս։

—Տանուտէր ջան, մօտենում է իծատէրը. եղբայր, եօթն այծ ունիմ, կորել էին. գնացի շատ մարդ եկայ, չգտայ. յետոյ այս մարդը պատահեց. հարցրի հօ չի տեսել. ասաւ տեսել եմ. հարցրի որ կողմի վրայ գնալնին, ցոյց տուեց. ես էլ ասացի, թէ ցոյց տուած կողմում գտնեմ, պոզը կոտրած այծը ընծայ կըտամ իրեն։ Գնացի դէպի ասած կողմի վրայ, ողորմի սրա հօրը, այծերս գտայ բերի. հիմի ուզում եմ պոզը կոտրածն իրեն տամ, առնում չի, ասում է առողջն եմ ուզում։ Ինչի՞ տամ առողջը, քանի որ ես այս եմ խոստացել . . .

—Տանուտէր, գլխիդ-արևիդ մատաղ—իծատէրի խօսքը կտրում է վար անողը—սրա ասածին չհաւատաս, լօխ սուտ է ասում. ա՛յ, ո՛նց էր բանը, եղբայր. ես ինձ համար վար էի անում. այս մարդը եկաւ բարովեց և

յաջողութիւն ցանկացաւ. բարովը Աստծունն է, ես էլ բարովն առայ և շնորհակալ եղայ. յետոյ սա հարցրեց՝ որքան է այսօրուայ վարածս, երէկ որն եմ վարել և յետոյ որը պէտք է վարեմ. ես էլ բոլորի պատասխանը տուի. իսկ սրա այծերն ես աչքովս չեմ տեսել, եթէ տեսած լինիմ, թող աչքերս կուրանայ, ականջներս խստակ խուլանան: Այն ինչ սա եկել է ինձ վրայ մեղ դնում, թէ այծիս պոզը դու ես կոտրել: Ա՛խր այսպէս էլ բան կըլինի՞, դու լինիս քո Աստուածը, տանուտէր ջան, ասա՛ է...:

Իսկ տանուտէրի միտքը որ ամբողջովին զբաղուած էր մի քիչ առաջ իւր կնոջ հետ ունեցած վէճով, տաքացած-տաքացած բացականչում է.

—Ինչի՞ էք ասում, ինչի՞, այդ այծը չի, որ եօթն այծ էլ ուրիշ բերէք, ես դարձեալ չեմ հաշտուիլ իմ կընոջ հետ:

Դու մի՛ ասիլ՝ նրանց կոյր բախտից տանուտէրն էլ է խ ո ւ լ լինում:

ԽՈՒԼ *)

---

*) Առողջ ժամանակս ինձ այս բանը պատմել է մեր խնամի Նախշունը, որը նոյնպէս խ ո ւ լ էր: ԼԵՒՈՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Զինաց կայսրութիւնը չորս ու կէս միլիոն քառակուսի մղոն տեղ է պարունակում, որ ասել է աշխարհիս ամբողջ հողային տարածութեան տասներկուերորդ մասը։

—

Անգղիոյ տէրութիւնը 310 միլիոն ժողովուրդ ունի եւ ամբողջ աշխարհի մէկ վեցերորդ հողային մասը գրաւած է։

—

Զայնի կողմանէ Թաթարները ամենից զօրաւոր եւ Ճապօնցիները ամենն ադգից տկար են։

—

Նորարոյն դիտողութիւններ Հրատ մոլորակի վրայ։—Յայտնի է, որ Իտալիայի Սկապարէլլի դիտնականը Միլանում յայտնագործեց Հրատի վրայ մի կարգ ծովային ճիւղեր կամ ջրանցքներ, որոնք սոյն մոլորակի հասարակածի մասներում երեւում են իբրեւ գծերի մի ցանց։ Այդ գծերից շատերը վերջին ժամանակներումս ջուխտ ջուխտ էին երեւում եւ գնում էին իրարու վերաբերութեամբ խիստ կանոնաւոր զուգահեռաբար։ Այդ ջրանցքների գոյութիւնը հաստատեցին 1886 թուականին Նիցցայի դիտանոցում դիտողները անկասկածելի կերպով։ Ներկայումս Հրատ մոլորակը դարձեալ մօտիկ է գտնվում մեր երկրից, թէեւ ոչ այնքան բարեյաջող դրութեամբ, ինչպէս որ էր 1882 եւ 1886 թուականներին։ Չնայած դրան, շնորհիւ օդի զեղեցիկ վիճակին եւ պ. Բիշոֆսգէյմի գործիքների դերազանցութեան, Նիցցայում յաջողուեցաւ նորանոր եւ շատ կարեւոր դիտողութիւններ անել Հրատ մոլորակի վրայ։ Փարիզի դիտութեան ճեմարանի մայիսի 14-ի նիստի մէջ պ. Պէրրոտէնը յայտնեց, թէ Նիցցայում նոր արած դիտողութիւններից երեւացել է, որ այն ջրանցքներից շատերը, որոնք 1886 թուականին պարզ տեսնուել են, բոլորովին անհետացել են։ Յետոյ թէ Հրատի ցամաքներից մէկը, որ քարտէզի վրայ Սկապարէլլին անուանած է Լիվիա, այժմ ջրի տակն է անցել։ Առաջ այդ ցամաքը Հրատի միւս մայր երկիրների նման երեւում էր կարմրաւուն, իսկ հիմա երեւում է կապտականաչ գոյնով, ինչպէս ծովերը։ Դրա հետ միաժամանակ նկատելի է ծովային մի նոր ճիւղ 20 աստիճան լայնութեամբ եւ 6 գերմանական մղոն երկայնութեամբ։ Հրատի հիւսիսային բեւեռի սառուցեալ գօտին շատ պարզ է երեւում, եւ Նիցցայի դիտողները համոզուել են, որ այդ գօտու վրայով երկար ու մէկ ծգուած է մի ջրանցք, որ պարզ բաժանուած է սպիտակ սառուցի եւ ծիւնի զանգուածներից։ այդ ջրանցքը միացնում է ծովի երկու առանձին մասերը։ Այս դիտողութիւնները վերին աստիճանի ապշեցուցիչ են եւ աւելի եւս հետաքրքրական են անում Հրատի ջրանցքները։ Արդէն սկսել են ենթադրել, որ այդ ջրանցքները արհեստական ծագումն ունին, իսկ նրանց մէջ եղած փոփոխութիւնները յառաջ են գալիս բնութեան երեւոյթներից։ Ինչ էլ որ լինի, Հրատի մակերեւոյթի վրայ յառաջ են եկել այնքան անուելի փոփոխութիւններ, որոնց նմանը, բաղդաւորապէս, մեր երկրագնդի վրայ չկան։

—

ԱՄԵՆԱՄԵԾ ՀՈՎԱՆՈՑԸ

Բլաղղօ քաղաքի Հովանոցի գործարանում պատրաստել են մի Հովանոց աֆրիկեցի մի թագաւորի համար. այդ Հովանոցը ամենամեծն է աշխարհիս երեսին. նրա տրամագիծն է 21 ոտնաչափ. Հովանոցը շինուած է իտալական ծղոտից և նրա տակ կարող են տեղաւորուիլ ոչ պակաս քան երեսուն մարդ։

ԼՈՂԱՑՈՂ ԹԱՏՐՈՆ

Մենք արդէն հաղորդել էինք, թէ Ամերիկայում շինել են մեծ շոգենաւերի վրայ ցուցահանդէսներ և տօնավաճառներ. այժմ կարող ենք հաղորդել, որ արդէն մտածել են ներկայացումներ տալ շոգենաւերում, որոնց մէջ լինում են մինչև 800 դերասաններ, և շրջելով զանազան ծովափնեայ քաղաքներ, նրանց նաւահանգիստներում խարիսխ ձգած տալիս են ներկայացումներ։

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1) Մի թռչուն թռցրի, բռնել չկարացի,
Մի հին մուշտակ հագի, հանել չկարացի։

2) Մեզ մէկ բան ունինք, եթէ գլխի վայր դնենք, լցվում է,
եթէ գլխի վէր դնենք, դադարկվում է։

3) Այստեղ չոքեմ, Երևան ջուր խմեմ։

4) Հինգ մարդ չափար են անում, ոչ հաց են ուտում,
ոչ ջուր են խմում։

ԽՆԴԻՐ

Ես մի թիւ ունիմ, որի թուանշանները եթէ յետ ու առաջ եմ դասաւորում, մէկը միւսից 27-ով թէ աւելի է, թէ պակաս։ Այդ ո՞ր թիւն է։

ՐԵԲՈՒՍ



Նախընթաց №№-ի մէջ եղած հանելուկի բացատրութիւնը։

ծմերուկ։ Նախ հեռացրեց 3—4 մասը յետոյ միացրեց միւս երկու կտորներին հետ այսպէս եւ երկրորդ անգամ կտրեց դրանց մէջից, որ եւ ստացաւ վեց կտոր։ Բեբուսի՝ Ծառ փոփոխական արմատ ոչ ունի։

1—2
3—4
5—6

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ